ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 19-22-ը Վիլնյուս (Լիտվայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը,

Սոսե Ստեփանյան
Գարիկ Մինասյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի խորհրդական
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Արևմտյան մաքսատուն-վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Լիտվայի հանրապետություն, ք. Վիլնյուս, 2023թ. սեպտեմբերի 19-ից 22-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրոպական միություն, Եվրոպայի արտաքին գործողությունների ծառայություն, Լիտվայի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Լիտվայի ֆինանսների նախարարությանն առընթեր մաքսային դեպարտամենտ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակը Արևելյան գործընկերության երկրներում մաքսային համագործակցության վերաբերյալ սեմինարին մասնակցությունն էր, որը նախատեսված էր մաքսային և սահմանային կառավարման փորձագետների համար: Սեմինարը հնարավորություն է տվել զարգացած երկխոսության հարթակ ապահովել Արևելյան գործընկերության երկրների համար՝ մաքսային և սահմանային ինտեգրված կառավարման ոլորտներում փորձի փոխանակման համար, ինչպես նաև ծանոթանալ համընդհանուր տարանցման համակարգի ընդլայնման հնարավորություններին և ԵՄ

մաքսային և սահմանային ինտեգրված կառավարման ոլորտում իրականացվող աջակցության ծրագրերին:

6. Քննարկված թեմաները՝

Սեմինարի ընթացքում ներկայացվել են ԵՄ տարբեր ծրագրերի շրջանակներում գործող տեխնիկական աջակցության ու ֆինանսավորման հնարավորությունները, այդ թվում՝ սահմանային ինտեգրված կառավարման հայեցակարգի ներդրման մասով, ինչպես նաև ԵՄ ընդհանուր տարանցման համակարգի ընդլայնման հնարավորությունները Արևելյան գործընկերության երկրների համար: Քննարկվել են նաև Արևելյան գործընկերության երկրների՝ Եվրոպական միությանը ինտեգրման գործընթացները մաքսային համագործակցության ոլորտում, ինչպես նաև առկա մարտահրավերները: Ներկայացվել է ԵՄ-ի միջազգային պատժամիջոցների քաղաքականությունը, ինչպես նաև այս շրջանակում առկա խնդիրների լուծման նպատակով այլ երկրների հետ համագործակցության շրջանակները: Քննարկվել են լիազորված տնտեսական օպերատորների ինստիտուտի ընդլայնման հնարավորությունները, այդ թվում՝ փոխճանաչման համաձայնագրերի կիրառման շրջանակի ընդլայնումը:

7.Հանդի[illegible]ումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Սեմինարի ընթացքում ներկայացվել են մաքսային գործառնությունների ոլորտում Ուկրաինայի հանրային ֆինանսների կառավարման բարելավման մասով ԵՄ աջակցության ծրագրի, ինչպես նաև Ուկրաինայում սահմանային ինտեգրված կառավարման ԵՄ աջակցության ծրագրի իրականացման առանձնահատկությունները: Արևելյան գործընկերության երկրները ներկայացրել են նաև մաքսային ոլորտում եվրոպական ինտեգրման շրջանակում իրենց առաջընթացը: Հայաստանը ևս հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով մաքսային ոլորտում եվրոպական ինտեգրման հիմնական ձեռքբերումները, այդ թվում՝ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում, առկա մարտահրավերները, ինչպես նաև առաջիկա համագործակցության հեռանկարները: Ներկայացվել են նաև Լիտվայի պետական սահմանի անցման կետում էլեկտրոնային հերթերի կառավարման համակարգի կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև հարևան երկրների հետ գործող՝ մաքսային տվյալների փոխանակման էլեկտրոնային համակարգը: Սեմինարի երկրորդ օրը իրականացվել է այց Մեդինինկայի սահմանային անցակետ, որտեղ ներկայացվել են բեռնատար ավտոմեքենաների և ուղևորների մաքսային հսկողության մասով մաքսային գործառնությունների, ինչպես նաև սահմանային այլ հսկողություն իրականացնելու առանձնահատկությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Տվյալ սեմինարի շրջանակում պայմանավորվածությունների ձեռքբերում կամ փաստաթղթերի ստորագրում չէր նախատեսվում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Արևելյան գործընկերության երկրների մաքսային օրենսդրության՝ Եվրոպական միության մաքսային օրենսդրությանը հնարավորինս ներդաշնակեցում, լիազորված տնտեսական ինստիտուտի օպերատորի զարգացում, ԵՄ ընդհանուր տարանցման համակարգին միանալուն ուղղված շարունակական քայլերի իրականացում, ԵՄ կողմից տրամադրվող երկարաժամկետ ու կարճաժամկետ աջակցության ծրագրերի իրականացում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սոսե Ստեփանյան

Գարիկ Մինասյան

27.09.2023թ.